




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
նշ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. ԽԱԶԱՆՅԱՆ

ՍՏԱՆՈԿԻ ՄՈՏ

19 ՄՈՍԿՎԱ 24

89199

Դ-28

6 NOV 2011

891.99

ku-28

h m

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՐՆԵՐԻ,
ՄԻԱՑԵՐ.

ՍՏԱՆՈԿԻ ՄՈՏ



2635
38

ՅԵՐԿՈՒ ՌՈՍՔ

Ընկեր Խաչանյանը բանվոր ե՛կ կազմարար:

Ստանոկի մոտ բանել ե քսանվեց տարի:

Այդ տարիների մեծագույն մասը, ապրել ե նա Բագ-վում, վորտեղ, բազմազգի պրոլետարիատի ծոցում, գի-տակցել ե իր գասակարգի շահերը:

Դպրոցի յերես չի տեսել:

Նրա դպրոցը յեղել ե ստանոկը, յեվ պրոլետարիատի պայքարը:

Ընկեր Խաչանյանի այս փոքրաթիվ գործերը, իբրեւ սկզբնական աշխատանք, յերբ լույս տեսնեն՝ մենք կարծում ենք, վոր ընկերները կունենան վորոշ չափա-նիշ, ու չեն լինի պահանջկոտ:

Անկախ արվեստային թերություններից, նա տվել ե անկեղծ յեվ հասկանալի ձեվով ապրումներ՝ վորոնք կարող են հարադատ լինել յուրաքանչյուր բանվորի համար:

Մոսկվայի հայ պրոլետգրողների
«ԶԱՐԿ» խմբակցութուն

Գնահատելով, յեւ վողջունելով մեր տպարանի հնա-
գույն բանվոր ընկեր Հ. ԽԱՉԱՆՅԱՆԻ ջանքերը՝ սլո-
ւետաբական գրականութեան մեջ,—արտաժամյա՝ շա-
րել յեւ տպել ենք այս գրքուկը՝ իբր նվեր:

Հ. Ս. Խ. Հ. Պետրատի Տպարանի
ԲԱՆՎՈՐՆԵՐ

Մոսկվա

Բանվորները,
Թող խտանա՞ն Լենինի դրոշակի տակ:
Մարքսը
մեր դասակարգի հասունացումն է,
Լենինը՝
հաղթանակի բանալին:

ՀՈԿՏԵՄԲԵՐՆ Ե ՔԱՅԼՈՒՄ

Անցել են դարերը հին,
իրենց ծանր բեռներով—
և մենք շղթաները նրանց,
դրել, կոտորտում ենք հիմա...

Դարերը հին՝ անքացին,
և նրանց ցավից հսկա,
ծնվեց բոցավառ արեգակ՝
Հոկտեմբեր մանուկը հսկա...

Ծնվեց նա հնոցներում,
և վորպես զի, լինի ուժեղ՝
անվում է երկաթով, քրտինքով:

Ծնվեց, մեծանում է նա,
և ցրում բոցեր աշխարհին,
և հիմա կանգնել վոտքի՝

Արդեն քայլերը հսկա—
դրել է Մոսկովից Բերլին:

Մ Ա Յ Ի Ս Ի Մ Ե Կ Ի Ն

Հիշում եմ ինչպես
դուրս ելինք գալիս մայիսի մեկին—
բայց ամեն մեկիս
բաժին եր հասնում արքայի ընծան՝
մեր մարմիններին ուռոցքներ կապույտ,
կամ աքսոր—անդարձ,
Սիբիր, Գերեզման...

Իսկ հիմա, հիմա՝
մենք տերը կյանքի—
յեղնում ենք նորից մայիսի մեկին,
ու աշխատանքի՝ աղատագրած մեր տոնը հսկա՝
դարձնում ենք փարոս աշխարհի առաջ:

Ու ձայն ենք տալիս
աշխարհի բոլոր հողամասերին,
բոլոր, ըստրուկ,
դեռ շղթայակապ մեր ընկերներին,
կանչո՛ւմ, հորդորո՛ւմ՝ դեպի միություն,
անվեհեր պայքար—
դեպի փրկարար հարվածը վերջին:

ԿԱՊԻՏԱԼԸ

Կապիտալը՝ դարավոր
փթած մի կաղնի—
փլչում է մեր առույգ
հարվածների տա՛կ:

Լսում եք ճռինչը, վաճառուհնը նրա,
տնքոցը չոր արմատների՝
վորոնք, շարունակ, դարե՛ր
խրվել են, խրվել,
խեղդում են բերկրանքը բանվորի.

Ջարկեցեք, հատո՛ւ, զի՛ր,
Բրտինքի ժրաջան վորդիք!
Կապիտալը փթած,
այլանդակ մի կաղնի՝
կպել է իր վերջին կեղեվին,
իր վերջին արմատին չոր—
ուզում է մնա՛ դեռ, ապրի՛,
ու կտրի ճանապարհը մեր:—

Ջարկեցեք հատու, զի՛ր,
Քրտինքի ժրաջան վորդիք!

*

Հոկտեմբերը բռնել է ճտիցը քո,—
ի՞նչ կարաս անի, բուրժո՛ւյ,
Հոկտեմբերը դե՛մ է տվել քեզ՝ պատին,
ո՛ւր պիտի՛ գնաս, բուրժո՛ւյ:

Սշխարքի բոլոր մասերում հիմա,
կազմակերպվո՛ւմ են բանվորները կուռ,
վոր քեզ նստեցնեն
քո՛ շինել տված ումբերի վրա:

Ե՛յ, դուք, հեռավոր,
դեղին կամ խափշիկ գույներով ցեղեր!
վորոնց տանջում է բռնակալի լուծ,
զրկում արեվից,—
կանգնեցե՛ք, դո՛ւք ել, կանգնեցեք վտա՛ր,
պահեցեք, դո՛ւք, ել ձեր դիրքերը՝ պի՛նդ,—
կտրեցե՛ք ճամբան!

Հոկտեմբերը բռնե՛լ է ճտիցը քո,—
ի՞նչ կարաս անի, բուրժո՛ւյ,
Հոկտեմբերը դե՛մ է տվել քեզ՝ պատին,
ո՛ւր պիտի՛ գնաս, բուրժո՛ւյ,

*

Գա՛նձը—

վազո՛ւմ են հետեւից,

խելացնոր, ագա՛հ,

վազո՛ւմ են, կոխոտում, կրծոտո՛ւմ իրար,

ու պարտավածների զիյերի վրայով՝

վազում են, վազո՛ւմ նորից,

խելացնոր, ագա՛հ...

Նզո՛ւք ձեզ:

Ճանապարհ,—

գալիս ե մի ուրի՛շ բանակ,

վոր թքե՛լ ե ձեզ, ձեր կռքերի վրա վոսկի,—

աշխատանքի բանակն ե գալիս:

*

Աշխատի՛ր մեքենա, աշխատի՛ր,

ցնծալի ե ինձ համար

քո յերգը, շարժումն անխոնջ.

Հիշում եմ, աշակերտ եյի դեռ,

յերբ յես պտույտ եյի տալիս

հսկա անիվը քո,

յերբ յես գերին եյի քո

և ընկնում եյի ուժասպառ:

Հիմա, լցնում եմ յերակները քո՝

յեղեքտրական հզոր արյունով,

և դու բանում ես անխոնջ...

Կգա՛, և կգա՛ մի որ,—

ամեն ինչ կանի մեքենան,

իսկ մարդիկ՝ ազատ,

կգրադվեն գիտությամբ:

*

Գեղջուկ, բատրակ ընկեր,
քո տերը խոզեր եր պահում
պահում եր քե՛զ ել նրանց պես.
քո տերը պահում եր յեղներ՝
լծում եր քե՛զ ել նրանց հետ:

Ու խոնարհ, հպատակ,
բանո՛ւմ եյիր դու,
կրում լուծն ու անեծքը քո.

Բայց յերբ դառնայիր
«ավելորդ բերան», —
ծե՛ր եյիր, կամ ուժից ընկած,
կամ քեֆի հարց ել ե, —
չուզեյին քեզ գործ տալ, —
բա՛ց եր միշտ դուռը քո առաջ,
և տիրոջ մտրակը՝ մի՛շտ պատրաստ...

Գեղջուկ իմ ընկեր,
տուր ձեռքդ բանվորին,
վոր պահենք բարձր՝
լենինի դրոշակ:

*

Յերկաթը՝ կարմիր լալա,
հանել քուրայից, —
կրթում եմ զնդանի վրա,
վոր շինեմ
ուզած ծաղիկը սրտիս...

Զնգում ե յերկաթը կարմիր՝
որերի նման մեր հրոտ.
զնգո՛ւմ ե իմ յերգը հպարտ, —
և յես հարբել եմ կրակով...

ԿՈՐՉԻ ԱՍՏՎԱԾ

Աստված ես, ինչ ես՝
 քեզ չե՛նք ճանաչում:
 Ասում են, ասում,
 վոր կա՛ս, կիմաս
 դու անմատչելի, հզոր թագավոր —
 և նկարագրում, նկարում են քեզ՝
 վորպես ինքնակալ,
 վորի կամքի հետ, չի՛ լինի խաղալ.
 ու նկարում են արքունիքը քո,
 պալատականներդ՝ սրբի թեվերով, —
 թիկնապահներդ, դահիճներդ ժանտ:
 Ո՞վ, ո՞վ տվեց քեզ այդքան զորություն, —
 անշուշտ, մեզ ճնշող տերերը կյանքի,
 վորոնք չե՛ն ուզում,
 չեն ուզում պոկվել իրենց գահերից.
 շինել են ժանտ խաչ՝ դրել մեր ուսին,
 ու յերազում են՝ ասլրել, իշխել միշտ,
 ականջները դինջ:
 Ի՛նչ կասես աստված,
 դու վողորմելի միայն խրավիլակ.
 ա՛նց կաց,
 դալիս ենք, մենք, բանվորներս,
 վոր խորտակեցինք գահերը բոլոր, —
 չենք թողնի քե՛զ ել:

Պ Ե Տ Ի Կ Ը

Հալածո՛ւմ են հալածո՛ւմ
 փողոցն ընկած Պետիկին.
 ասես լինի շան լակոտ,
 հայհոյում են, հալածում:

Գո՛ղ ե...

տվե՛ք վզակոթին թող սատկի.
 տա՛ս աարեկա՛ն՝
 հաղար տեսակ աշխատա՛նք կա,
 բանի՛ թող:

Ու փախչո՛ւմ ե Պետիկն անտեր,
 գիշերները պատերի տակ ծվարում,
 ձեռք ե մեկնում անցորդներին հաստավոր,
 բայց ստանում անարգանք,
 կամ թե թքած մի կոպեկ:

— Կացե՛կ մարդիկ,

յես լա՛վ գիտեմ եդ աղին,
 հայրը մի հեզ բանվոր եր,
 վորին մի որ
 աշխատանքից զրկեցին...

Քարշ եկավ նա, երկա՛ր, երկար ժամանակ,
 յետո... յետո՝ տարան Սիրիլը.

4084

Իսկ մայրը՝
թոքախտ ունեւր:

—Ո՛ր կապիտալ!
կգա մի որ, անպատճառ՝
փրկութեան որ, դժգոհ որ,
վոր կապիթի՛ քո գլխին...

Բազու, 1907 թ.

2635
38

ՀՀ Ազգային գրադարան



NL0341381

34098